

Յեղափոխական: Այսպէս որակուած թախիծ մը գոյութիւն չունի: Անիկա տխուր էր նախանձէն: Իրեն այնպէս էր եկած, որ այդ զմայլելի գաւառը գողութիւն մըն էր, կատարուած հիմա, իր ցեղին վրայ: Վասպուրական, Տարօն, Ծոփք, Աղձնիք: Ասոնք պատմական բառեր էին ու կը նմանէին պառաւ կիներու, որոնք հեշտանք չեն արթնցրներ: Կիլիկիա՛ն: Գարնան վերջերուն անմոռանալի պատկեր մըն է անիկա, կ'ըսեն, այցելուներուն: Անոր աչքերը նոր կը հանդիպէին հարստութեան սա ձեւին, որ հողն է, բայց թեւաւոր օդին մէջ կանգուն, ցորենի հասկէ ու ծառի մարմինէ: Ընկեր Մաթիկը ախորժ չունէր բանաստեղծութենէ, հաւատարի՛մ՝ իր գիտական կազմութեան, որ բնութեան տեսարանները դասի կամ շահու նիւթ կ'ընծայէին: Մեր լեզուով ասիկա կը նշանակէ չախորժիլ նկարագրելէ, ան ալ օտարին աչքով: Կը յարգեմ իր վերապահութիւնը ու կու տամ շեման իր պատկերներուն: Յատկանշական է ծովին պակասը, ինչպէս նաեւ գիտական: Տաւրոս: Բայց դասական լերան փոխարէն, որ անոր մտքին ամէնէն տիրական ճարտարապետութիւնն էր բնութենէն՝ հարստութիւն, նոյնիսկ տեսակ մը կորութիւն: Անշուշտ Արարատը կը միջամտէր, լուսաւորելու համար սա զգայնութեանց զարտուղութիւնը, քանի որ, միշտ ուրիշներու ըսածով, Նոյնընկալ գագաթը երկինքին միտուած սեպի կը նմանէր շատ մը տեղերէ: Դա՛շտ, ուր հող չ'երեւար, ամբողջ հասկ ըլլալուն: Ոչ մէկ տիրապետող կայք: Քաղա՛քը: Կղմինտրէ մանրուք, փոշիով գարգմանակուած: Ագարակներ, գորշ երեսներով, կարմիր գլուխով: Պղտոր ու դեղին ամէն բան: Պատմական ոգեկոչում: Աւերակ բերդեր: Ռուբինեան հարստութիւն: Ու վերաքաղը ցեղին ստեղծագործ ընդունակութեանց: Ագգային պատմութիւնը շարադրումի նիւթ մը չէր անոր բերնին, այլ՝ կենդանի իրականութիւն մը: Դեռ այդ հարստութիւնը պէտք եղած չափով չէ վերածուած անցեալի: Ասիկա թերեւս անոր համար, վասնզի Ռուբինեան շրջանը ամէնէն թելադրական մասն է մեր անցեալին: Անին